



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Archbishop Sion Mamoojian, Primate

Թիւ 12825

Փետրուար 28, 1966

Հոգեշնորհ
Տ. Ժիրայր Արղ. Թաշմեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Եւ Նախագահ Պատուարժան Եփեմեան Խորհուրդի
Թորանթօ.

Սիրելի Հայր Ժիրայր,

Ստացած ենք Ձեր 1966 Փետրուար 29 թուակիր տեղեկագիրը, որով
կը տեղեկացնէիք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 20ին գումարուած
Ձեր Տարեկան Եփեմեան Ժողովին մէջ կատարուած է Եփեմեան Խորհուրդի
մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը
խնդրէիք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական Կա-
նոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած է
ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները իբրեւ անդամ Եփեմեան
Խորհուրդի.

- Տիարք՝ Օննիկ Ժալեան
- Յարութիւն Արթինեան
- Ժիրայր Բէտէրեան
- Կարօ Տէիրմէնժեան
- Հայկ Սէլեան

Կը յանձնարարենք որ Ձեր Եփեմեան Խորհուրդի նոր դուանի անուն
հասցէները Առաջնորդարան դրկէք փութով:

Օրհնելով Եփեմեան Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ
Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի-
մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայն-
քիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Եւ Կանադայի